# ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԻՋՈՑՈՎ

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 1.1-5, 8

*1 Առաջին գիրքը, որ գրեցի, այն ամենի մասին էր, ո՛վ Թեոփիլե, ինչ Հիսուսը <u>սկզբից արեց</u> և*
*ուսուցանեց 2 մինչև այն օրը, երբ **<u>Սուրբ Հոգու միջոցով</u>** իր ընտրյալ առաքյալներին*
*պատվիրեց և <u>համբարձվեց</u>, 3 որոնց իսկ իր չարչարանքներից հետո բազում*
*ապացույցներով կենդանի ներկայանալով՝ քառասուն օրերի ընթացքում հայտնվեց նրանց և*
*Աստծու արքայության մասին խոսեց: 4 Որքան ժամանակ որ միասին էին, Հիսուսը նրանց*
*պատվիրում էր. Չհեռանա՛ք Երուսաղեմից, այլ Հոր <u>խոստմա՛նը</u> սպասեք, ինչպես որ*
*ինձանից լսեցիք. 5 որովհետև չնայած Հովհաննեսը մկրտում էր ջրով, իսկ դուք սրանից ոչ*
*շատ օրեր հետո <u>կմկրտվեք Սուրբ Հոգով</u>:*

*8 Բայց դուք զորություն կստանաք, երբ Հոգին ձեզ վրա գա, և իմ վկաները կլինեք*
*Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում, մինչև աշխարհի ծայրերը:*

*9 Եւ երբոր այս ասեց, նորանք նայելիս՝ վերացաւ. Եւ մի <u>ամպ</u> (Հոգին) վեր առավ նորան*
*նորանց աչքերից:*

> *Հայ. 1.7 - Ահա նա գալիս է <u>ամպերով</u> (Սուրբ Հոգով). եւ ամեն աչք կ՛տեսնէ նորան, եւ նորանք որ խոցեցին նորան. եւ նորա վերայ կոծ կ՛անեն երկրի ամեն ազգերը. Այո, Ամէն:*
>
> *1 Տիմ. 3.16 - Աստվածապաշտության խորհուրդը հայտնապես մեծ է. Աստված մարմնով հայտնվեց, **<u>Հոգով արդարացավ</u>**, երևաց հրեշտակներին, քարոզվեց հեթանոսների մեջ, հավատով ընդունվեց աշխարհում ու փառքով համբարձվեց:*

## I. ԵՐԿՐԻ ՎՐԱ ԵՂԱԾ ԺԱՄԱՆԱԿ ՀԻՍՈՒՍԸ ՆՈՒՅՆՔԱՆ ԿԱԽՎԱԾ ԷՐ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՑ, ԻՆՉՊԵՍ ՄԵՆՔ ԱՅՍՕՐ:

*1 ինչ Հիսուսը սկզբից արեց և ուսուցանեց 2 մինչև այն օրը, երբ **<u>Սուրբ Հոգու միջոցով</u>***
*իր ընտրյալ առաքյալներին պատվիրեց և համբարձվեց,*

> *Ղուկաս 4.1 – Հիսուսը, Սուրբ Հոգով լցված, Հորդանանից վերադարձավ և Հոգով անապատ առաջնորդվեց:*
>
> *Ղուկաս 4.14 - Եվ Հիսուսը Հոգու զորությամբ վերադարձավ Գալիլեա...*
>
> *Ղուկաս 4.18– Տիրոջ Հոգին ինձ վրա է, որովհետև ի՛նձ օծեց և ի՛նձ ուղարկեց...*
>
> *Հով.6.63 – Հոգին է կյանք տվողը. մարմինը ոչ մի օգուտ չի տալիս: Այն խոսքը, որ ես ձեզ ասացի, Հոգի է ու կյանք:*

- *Հոգին ակտիվ էր Հիսուսի ծննդյան ժամանակ (Ղուկաս 1.35):*
- *Հոգին ակտիվ էր Հիսուսի մկրտության ժամանակ (Ղուկաս 3.22):*
- *Հոգին ակտիվ էր Հիսուսի ծառայության ժամանակ (Ղուկաս 3.22):*
- *Հոգին ակտիվ էր Հիսուսի մահվան ժամանակ (Եբր. 9.14):*
- *Հոգին ակտիվ էր Հիսուսի հարության ժամանակ (Հռ. 8.11):*

*Գործք. 10.37-38 – Գիտեք Հիսուսին, որ Նազարեթից էր. թե ինչպե՛ս Աստված նրան **օծեց Սուրբ Հոգով** ու զորությամբ. որը շրջում էր՝ բարիք գործելով ու սատանայից բռնված բոլորին բժշկելով, որովհետև Աստված նրա հետ էր:*

- ***ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐՑԸ...***

*Արդյոք մեր հույսը մե՞զ վրա է, թե՞ փափագում ենք Նրա Հոգուն*

***Գործք Առաքելոց 19-ում Պողոս Առաքյալը տալիս է երկու նախազգուշացում երկու տարբեր խմբերի վերաբերյալ:***

1. ***Դա Սուրբ Հոգու անձի և զորության ուրացումն է:***

*Գործք Առաքելոց 19.2 – Պողոսը նրանց հարցրեց. Երբ հավատացիք, Սուրբ Հոգին ընդունեցի՞ք: Նրան պատասխանեցին. Մենք չենք էլ լսել, որ Սուրբ Հոգի կա:*

*3 Պողոսն ասաց. Արդ ինչո՞վ մկրտվեցիք: Նրանք ասացին. Հովհաննեսի մկրտությամբ:*

*Գործք 19.5-6 – 5 Եվ լսելով՝ մկրտվեցին Տեր Հիսուսի անունով: 6 Երբ Պողոսը ձեռքը նրանց վրա դրեց, Սուրբ Հոգին իջավ նրանց վրա. նրանք տարբեր լեզուներով էին խոսում ու մարգարեանում:*

2. ***Դուք չեք կարող գործադրել Սուրբ Հոգու պարգևները առանց Սուրբ Հոգու մկրտության:***

*Գործք Առաքելոց 19.13-17 – 13 ...փորձեցին չար ոգիներ ունեցողների վրա Տեր Հիսուսի անունը կանչել՝ ասելով. **Երդվեցնում եմ ձեզ այն Հիսուսով, որին Պողոսն է քարոզում:** 14 Այս անում էին ոմն հրեա քահանայապետ Սկևայի յոթ որդիները: 15 Բայց չար ոգին պատասխանեց ու ասաց. **Հիսուսին գիտեմ և Պողոսին ճանաչում եմ, իսկ դո՞ւք ով եք:** 16 Եվ այն մարդը, որի մեջ չար ոգի կար, նրանց վրա հարձակվելով և երկուսին էլ բռնելով, այնպիսի ուժ ցուցաբերեց նրանց նկատմամբ, որ այդ տնից մերկ ու վիրավոր փախան: 17 Այս բանը հայտնի դարձավ Եփեսոսում բնակվող բոլոր հրեաներին և հեթանոսներին: Նրանց բոլորի մեջ ահ ընկավ. և Տեր Հիսուսի անունը փառավորվում էր:*

## II. ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՐԱՑՆՈՒՄ Է ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ:

*Հովհաննես 14.12 – Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թե Ինձ հավատացողը այն գործերը, որ Ես գործում եմ, նա էլ կգործի և նրանցից էլ ավելի մեծ բաներ կգործի, որովհետև Ես Իմ Հոր մոտ եմ գնում:*

- ***Ինչպե՞ս է հնարավոր ավելի մեծ գործեր անել առանց Սուրբ Հոգով մկրտության:***

  *4 Հիսուսը նրանց պատվիրում էր. Չհեռանա՛ք Երուսաղեմից, այլ Հոր խոստմա՛նը սպասեք, ...իսկ դուք սրանից ոչ շատ օրեր հետո կմկրտվեք Սուրբ Հոգով:*

  *8 Բայց դուք զորություն կստանաք, երբ Հոգին ձեզ վրա գա, և իմ վկաները կլինեք Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում, մինչև աշխարհի ծայրերը:*

  *Հով. 7.39 – Սա ասաց այն Հոգու համար, որ ընդունելու էին Նրան հավատացողները, որովհետև դեռ Սուրբ Հոգին տրված չէր, որովհետև Հիսուսը դեռ չէր փառավորված:*

## Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ